ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ք. Հրազդան 21.12.2018թ. ժամը 14[00]

ՀՀ Կոտայքի մարզպետարանի կարիքների համար <<ԿՈՏ-ԷԱՃԱՊՁԲ-19/1>> ծածկագրով ԷԱՃ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ալեքսան Եղիշյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

Անդամներ՝

Համլետ Ստեփանյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետ,

Վարդան Քալանթարյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ,

Հանձնաժողովի քարտուղար՝

Հասմիկ Հակոբյան - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության վարչատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ

1. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատում.

1.1 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված եզրակացության համաձայն առաջին տեղ զբաղեցրած ընկերությունը՝ <<Ֆլեշ>>ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ:

1.2 Առաջին տեղ զբաղեցրած ընկերությունը՝ <<Ֆլեշ>>ՍՊԸ-ն Համակարգի միջոցով ներկայացրել է հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը, ինչը համապատասխանում է <<ԿՈՏ-ԷԱՃԱՊՁԲ-19/1>> ծածկագրով ԷԱՃ գնման ընթացակարգի հրավերի պահանջներին:

2. Գնահատող հանձնաժողովն որոշեց.

2.1 <<Ֆլեշ>>ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

2.2 Կիրառել անգործության ժամկետ."Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.3 անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնել պայմանագրի ապահովումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝	----------	*Ա.Եղիշյան*
անդամներ՝	----------	*Հ.Սրբեփանյան*
	----------	*Վ.Քալանթարյան*
Քարտուղար՝	----------	*Հ.Հակոբյան*